

Ներկայության ցանկացած դրսևորում պետք է մեկնաբանվի նրա լինելությունից, այսինքն՝ ժամանակայնությունից»:

Մարտին Հայդեգեր<sup>1</sup>

«Այսօր մենք ապրում ենք պոստմոդեռնի ընդհանուր իրավիճակում: Եվ դա ենթակա չէ մեր ընտրությանը: Որովհետև պոստմոդեռնը «գաղափարախոսություն» կամ դիրքորոշում չէ, որ մենք կարող ենք ընտրել. պոստմոդեռնը մեր գոյության պայմանն է, մեր ճակատագիրն է»:

Քեյթ Չենկինս<sup>2</sup>

## ԺԱՄԱՆԱԿԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ\*

Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի առիթով մեր հանդեսի նախորդ համարում հրապարակված հոդվածներն ու ուսումնասիրություններն ամբողջական չէին լինի, եթե բավարարվելով ոչ վաղ **անցյալի** քննությանը՝ սոցիալական մեր դժվարին **ներկան**, որում թաքնված են **ապագայի** կանխատեսման և ծրագրավորման անտեսանելի բանալիները:

Ներկայումս ակնհայտ է դարձել, որ եթե մեր ժողովրդի մտածողության մեջ շարունակեն կուտակվել և խտանալ երկրի ապագայի վերաբերյալ վատատեսական պատկերացումները, ապա դրանց միջոցով կարող է տեղի ունենալ ապագա զարգացումների անբարենպաստ սցենարների ծրագրավորումը ենթագիտակցության մակարդակում: Նման գործընթացին կարող է նպաստել հետևյալ պարզ իրողությունը. մեր հասարակության ճնշող մեծամասնությունը համոզված է, որ երկիրն ընթանում է ոչ ճիշտ ուղիով:

Ուրեմն՝ ներկա հանգրվանում հայ գիտական մտքի առջև ծառայած կարևոր խնդիրներից մեկը նման վատատեսական պատկերացումների կուտակման գործընթացի լիցքաթափումն է՝ դրանք հրապարակային քննարկման ասպարեզ դուրս բերելու միջոցով, ինչը թույլ կտա ապագայի կանխատեսումն իրականացնել **ուս-**

\* Ընդունվել է տպագրության 20.12.2011:

1 **Мартин Хайдеггер**, Бытие и время, <http://lib.ru/HEIDEGGER/bytie.txt>

2 Հղումը ըստ՝ Постижение истории: онтологический и гносеологический подходы: Под ред. **В. Н. Сидорцова, О. А. Яновского, Я. С. Яскевич**, Мн., 2002. с. 73.

Գ. (Թ) գրաբ. քիվ 4 (36) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011  
վեյմ համահայկական հանդես

**ցիռնալ** կատեգորիաներով: Որովհետև ինչպես անհատի, այնպես էլ հասարակության համար տեսանելի սպառնալիքներից շատ ավելի վտանգավոր է անորոշությունից բխող վախի գգացումը:

Մեր ենթագիտակցության մեջ աննկատ կերպով ընթացող վատատեսական սցենարների **կողավորումը** ապագայի ռացիոնալ պատկերով փոխարինելու խնդրի լուծումը հնարավոր է միայն աշխարհում, տարածաշրջանում և մեր երկրում արձանագրվող նորագույն զարգացումների քննությունը վերջիններիս իմաստավորման մեր ազգային կերպի հետ զուգորդելու միջոցով: **Ժամանակի գոյաբանական իմաստի** ավանդական-հայկական ընկալման ապամիֆականացումը թույլ կտա ազգային ժամանակի հաշվառումը համապատասխանեցնել մեր շուրջը ծավալվող գործընթացների հաճախականությանը:

Պատճառն այն է, որ ժամանակի իմաստի մասին ռացիոնալ պատկերացումները և նրա հայկական ըմբռնումը բոլորովին տարբեր հասկացություններ են: Մեր օրերում ևս հայերիս մտածողության մեջ միմյանց են «հրմշտում» միֆական, սոցիալական, ֆիզիկական և այլ ժամանակների կոտորակված ընկալումները, ինչի հետևանքով **ոմանք** շարունակում են մտովի «վերախմբագրել» կորուսյալ հնարավորություններով լի Հայոց պատմությունը, **մյուսները**՝ առաջնորդվել Բ. Ֆրանկլինի «ժամանակը փող է» տրամաբանությամբ, իսկ **երրորդները**՝ թաքնվել ժամանակի պարզեցված՝ մասնագիտական կամ ընտանեկան «չափույթների» շրջագծում:

Հարց է առաջանում՝ բայց մի՞թե այդքան դյուրին է Հայաստանին ու հայությանը սպասող զարգացումների վերաբերյալ ստեղծել մի այնպիսի **ֆուտուրիստական հայացք**, որը թույլ կտա նախապես հաշվառել հնարավոր վտանգների բացասական ազդեցությունը: Ի վերջո, մարդկային հասարակությանը վերաբերող կանխատեսումները միշտ էլ սխալվելու լուրջ հավանականություն են պարունակում: **Կամքի ազատությամբ** օժտված էակները՝ մարդիկ են կերտում իրենց ապագան, որոնց փոխբացասող գործողությունների արդյունքում ձևավորվում են մի քանի այլընտրանքներ, տեղի է ունենում դրանց բախումն ու միահյուսումը, ինչի «հետևանքն էլ դառնում է պատմական անհրաժեշտության իրացման վերջնաարդյունքը, որի անունն է պատմություն»<sup>3</sup>: Եվ երբ այդ այլընտրանքների բախման ու միահյուսման վերջնաարդյունքը կարելի է հաշվարկել սուկ ժամանակային որոշակի կտրվածքով, ժամանակն անկասելիորեն առաջ է ընթանում՝ անցյալի վերածելով ներկան: Մինչդեռ, մեր հավաքական մտածողությունը շարունակում է մնալ միֆականացվող անցյալի ու հեռացող ներկայի սահմանագծին և այդպես էլ չի գտնում դեպի ապագան ճեղքում արձանագրելու արահետները:

Պատճառն ակնհայտ է. եղելությունների հետահայաց գնահատման մեր դարավոր «իմաստության» մեջ ժամանակայնությունից զուրկ հասկացություններն այնքան են միաձուլվել իրար, որ այսօր էլ մեզ թելադրում են ժամանակի գոյաբանական իմաստը ներկայից կտրելու և անցյալում «թաքցնելու» ավանդական-հայկական գործելակերպը<sup>4</sup>:

Այս ելակետից բխող՝ ներկայի ու ապագայի հանդեպ հայեցողական վերա-

3 Смоленский Н. И., Теория и методология истории, М., Издательский центр «Академия», 2010, с. 73.

4 Նման երևույթը օտարների կողմից մեր Հայրենիքի նվաճման փաստով բացատրելուց առաջ հարկ է վերհիշել, որ այդօրինակ մտասևեռումն առկա էր ոչ միայն Սասունցի Դավիթ եպոստոս, այլև հեթանոս աստվածներից Միհրի պաշտամունքի հետնախորքում:

բերմունքը այդպես էլ աննկատ է թողնում այն իրողությունը, որ ժամանակի յուրաքանչյուր ակնթարթում կերտվող նորին մեծություն պատմությունը՝ որպես այլընտրանքների բախման և միահյուսման վերջնաարդյունք, ունի նաև մեկ այլ, ոչ պակաս կարևոր հատկանիշ՝ **ինվարիանտությունը**<sup>5</sup>, ինչը հաջորդ շրջափուլերում ամեն անգամ ստիպում է ապավինել սուկ «հայի հետին խելքին»։ Իրականում, քանի դեռ մեր **հետահայացը** չի միաձուլվել ապագան կանխատեսող **առաջահայացի** հետ, չենք կարող տեսնել այն, ինչը սրբագրելու համար սովորաբար մի քանի սերունդների ջանքեր ու գոհողություններ են պահանջվում:

Ուստի առողջ բանականությունն ու մշտաբթուն բարոյականությունը հայերիս յուրաքանչյուր սերնդի թելադրում է յուրովի գիտակցել այն պարզ ճշմարտությունը, որ մենք՝ որպես ազգային կեցության ու գիտակցության կրողներ, գոյություն ունենք սուկ որոշակի ժամանակի մեջ, իսկ ահա **անցյալը ոչ թե գոյաբանական, այլ ճանաչողական կատեգորիա է**: Այսինքն՝ մեր սերնդի ֆիզիկական գոյության ժամանակահատվածը ազգի ճակատագրի հետ կապվում է այնքանով, որքանով կենսաբանական էակին բնորոշ գործառույթներից գատ իրականացնում ենք նաև առաջանցիկ քայլեր ու կանխարգելիչ գործողություններ:

Կեցության իմաստը նրա ժամանակայնության մեջ փնտրելու **հայդեգերյան մտասևեռումի** նշանակությունն էլ ավելի է մեծացել մեր օրերում, երբ իրենց հավաքական գոյության իմաստը գիտակցող ազգերը միավոր ժամանակի յուրաքանչյուր պահը դիտարկում են ապագայի տեսլականով: Որովհետև ներկան այնքան արագորեն է վերածվում անցյալի, որ անմիջապես հնանում են նաև նրանում առկա պորբլեմների՝ թվում է, թե ռացիոնալ լուծումները և անընդհատ հարկ է լինում մտածել «գնացքի հետևից» վազելու մասին:

Սակայն, անգամ նման աննախադեպ արագացումները չեն կարող հերքել մեր ապրած դարաշրջանի խորքային էության՝ **իմաստի** գիտակցման սուր պահանջմունքը, քանի որ նրա արտակարգ հարաշարժությունը՝ որպես ճանաչողության ելակետային պայման, մեզ համար հանդես է գալիս իբրև **տրված իրողություն**, որը հնարավոր չէ շրջանցել ապագան բացահայտելու ճանապարհին: Այս առումով գործ ունենք մի երևույթի հետ, որն այլևս չի կարելի անվանել **Նորագույն պատմություն**, ինչն իրականում **Նոր ժամանակների** օրգանական շարունակությունն էր և սկզբունքորեն չէր տարբերվում իր նախորդից: Սկզբունքային տարբերությունները հանդես են գալիս Հայաստանի անկախացմանը հաջորդած վերջին երկու տասնամյակներում՝ այդպես էլ դուրս մնալով մեր հավաքական գիտակցության փոքր-ինչ խախտված ռապիդակից: Քանզի ներկա՝ **հետարդիական (պոստմոդեռն)** դարաշրջանը, հաջորդելով **արդիականությանը (մոդեռնին)**, բնորոշվում է ապագայի որոշակի և հստակ տեսլականով օժտված զարգացման առաջադիմական բնորոշների ճգնաժամով, որոնք ընկած են եղել Նոր ու Նորագույն պատմության գաղափարական փնտրտուքի կիզակետում: Հետարդիականության հիմնական առանձնահատկությունը՝ մարդկության ապագայի մասին խորիրդային տեսլականի ձախողման փաստի գուգորդումը ազատական համակարգի «պատմության ավարտը» դառնալու հավակնության հանդեպ հուսախաբությանն ու լուրջ կասկածներին, ստեղծել է մի նոր աշխարհ, որն այլևս ո՛չ Բանականության դարի «անուղղելի լավատեսն» է և ո՛չ էլ սուկ 20-

5 **Ինվարիանտությունը** այլընտրանքների բախման ու միահյուսման արդյունքում պատմության ընտրած ուղու կամ կատարված փաստի անշրջելիության հաստատագրումն է:

րդ դարասկզբին բնորոշ «մայրամուտի» շպենգելերյան սպասումների ուղեկիցը:

Վերջին 20-ամյակում մարդկությունն արձանագրել է Նոր և Նորագույն ժամանակներին բնորոշ՝ առաջադիմության (պրոգրեսի) անգուսպ պաշտամունքի փոխակերպումը «**շարժում առանց նպատակի**» («**movement without the aim**») բանաձևին: Իսկ «շարժում» հասկացության նպատակային ցուցիչների անորոշության հետևանքն է դարձել համաշխարհային-պատմական մտածողության վրա հիմնվող ճանաչողական դիսկուրսի **կոտորակման, մանրացման** փաստը:

Այս իրողությունը «սնվում է» տնտեսական ճգնաժամերի, տարածաշրջանային հակամարտությունների և այլ վտանգավոր զարգացումների միջոցով, իսկ մյուս կողմից՝ ինքն է տեսական-աշխարհայացքային «սնունդ» մատակարարում վերջիններիս: Ուստի, անկախ նրանից՝ նման ճգնաժամերը հրահրվա՞ծ են ուժի որոշակի կենտրոններից, թե՞ ինքնաբոխ են, վերջնաարդյունքի առումով վերածվում են գոյության կռվի նորագույն մարտահրավերների՝ փոքր պետությունների ու կոտորակված ազգերի համար: Որովհետև ուժերի հաշվեկշռի փոփոխության արդյունքում պարբերաբար հատվող «մեծ անտառի» փոքր տաշեղների հետագա ճակատագրի հարցը գլոբալ մակարդակում դիտարկվում է «արագ արդյունք» ապահովող «գիտափորձերի» համատեքստում:

Հարց է առաջանում՝ արդ որտե՞ղ ենք կանգնած **մենք՝ ինքներս**, համաշխարհային բեմահարթակի վրա «շարժում առանց նպատակի» սկզբունքով գործառող այս աննախադեպ արագացումների պայմաններում: Խոստովանենք, որ անցած 20 տարիներին մեր երկիրն ապրել է ո՛չ հետարդիականությանը, ո՛չ էլ անգամ արդիականությանը բնորոշ օրինաչափություններով, այլ անտիկ պատկերացումներին ներհատուկ՝ պատմության **շրջափուլային տեղապտույտի** սխեմայով: Անցած 20-ամյակում տնտեսաքաղաքական զարգացման **այլ մակարդակի վրա**, երկրի անվտանգության ապահովման ինչ-ինչ նկատառումների թելադրանքով կրկնել ենք 1918 թվականից հետո Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններին բաժին ընկած շուրջ 70-ամյա պատմության հիմնական շրջափուլերը. գարթոնք և ազգային ինքնագիտակցության վերելք, անկախ պետականության ձևավորում, նրա քաղաքական բովանդակության սահմանափակում, կառավարման նախկին համակարգի «ռենեսանս» և վերջինիս արագ լճացում: Պատճառն այն է, որ 1991-ին հայտնվելով քաղաքագետների կողմից «հետխորհրդային լեգիտիմություն» անունը ստացած պետության անորոշ կարգավիճակում, անցած 20-ամյակում մենք «արբանյակի» նման պտտվել ենք Ղարաբաղյան հակամարտության ու պատերազմի արդյունքների սառեցման պարզ հետևանքի՝ **տարածաշրջանային ստատուս-քվոյի** շրջագծում: Այդ ստատուս-քվոն, որի հիմքում ընկած է գերտերությունների պայքարի անավարտության փաստը, ձևավորել է նաև վերջին 20 տարիների **ներպետական ստատուս-քվոն**՝ իշխանության ինքնավերարտադրման սկզբունքի գերակայությունը հայ ժողովրդի կամքի հանդեպ:

Սակայն, որքան հստակ և աներկբա իրողություններ են Հայաստանին բաժին ընկած տարածաշրջանային և ներպետական ստատուս-քվոները, նույնքան էլ անվիճելի է **գլոբալ** մակարդակի վրա հավասարակշռության բացակայությունից բխող նորագույն զարգացումների անկասելի ընթացքը: Այսինքն՝ երբ աշխարհը սկսել է փոխվել սարսափելի արագությամբ, մենք ինքներս շարունակում ենք

պատվել «փակ շրջանակի» ներսում: Ուստի՝ միակ անորոշությունը, որ ծնունդ է առնում այս իրողությունների արձանագրումից, գլոբալ մակարդակում ծավալվող զարգացումների երկաթյա տրամաբանությամբ՝ տարածաշրջանային և ներհայաստանյան ստատուս-քվոների փլուզման պահի, այսինքն՝ պատմության կողմից մեզ տրված «անվրդով լճացման» մեջ ապրելու **ժամանակի տևողության** հարցն է:

**Որքա՞ն ժամանակ է տրված «հետխորհրդային լեզիտիմության» հովվերգության գրկում համաշխարհային, տարածաշրջանային, ներպետական ու ներազգային մարտահրավերների կուտակումն անտեսող Հայաստանի երրորդ Հանրապետությանը:** Դատելով նրանից, որ վերջին տարիներին Հայաստանին հարող տարածաշրջաններում մնան անորոշության վրա հիմնվող վարչակարգերի փոխակերպման հիմնախնդիրը սկսել է լուծվել ավելի լայն և ընդարձակ տեսլականի՝ «Մեծ Մերձավոր Արևելքի» ձևավորման և դրան հակազդելու՝ **փոխբացատող այլընտրանքների** բախման տիրույթում, ժամանակը, որ տրված է մեզ՝ տարածաշրջանների վերաձևման համատեքստում, ավելի քան սահմանափակ է: Գլոբալ մակարդակով արձանագրվող արագացումները վկայում են, որ «Տարածաշրջանների վերաձևումների փուլերն արդեն 7-10 տարվա պարբերականություն են ձեռք բերել»<sup>6</sup>: Եվ եթե մենք հայտնվել ենք մնան ծրագրերի թատերաբեմը դարձած գործընթացների կիզակետում, ապա խիստ սահմանափակ ժամանակ ունենք այդ իրողությունը գիտակցելու և գործնական եզրահանգումների գալու համար: Դրա անհրաժեշտությունը թելադրվում է նաև հետևյալ փաստի միջոցով. «Մեծ Մերձավոր Արևելք» հասկացությունը ներառում է այն բոլոր ենթատարածաշրջանները, ուր հայությունը մինչ օրս ստեղծել է իր ինքնապահպանման խնդրի լուծման համայնքային (**Սիրիա, Լիբանան, Իրան**) կամ պետական (**Հայաստան, Արցախ**) շատ թե քիչ կայուն և հուսալի մեխանիզմներ: Ուրեմն՝ գլոբալ մակարդակի վրա այլընտրանքների բախման և միահյուսման հետևանքով վերջիններիս վերաձևման հեռանկարը շոշափում է ձուլման վտանգից զերծ հայության գրեթե բոլոր հատվածների, այսինքն՝ ապագայի կտրվածքով **համայն հայության** ճակատագրի հարցը:

Դեռևս չարդիականացած Հայաստանը, հայտնվելով հետարդիական դարաշրջանին բնորոշ «փոթորիկների գրկում», անխուսափելիորեն նորից է կանգնելու սեփական անվտանգության ապահովման հիմնախնդրի առջև: Եվ այն ստատուս-քվոն, որը հետխորհրդային Հայաստանի համար ծառայել ու ծառայում է իբրև բակունցյան «բզեզի պատյան», խախտվելու է ոչ թե մեր ցանկությանը, այլ համաշխարհային ու տարածաշրջանային իրողությունների ներգործության արդյունքում: Ակնհայտ է նաև, որ քանի դեռ աշխարհի հզորները զբաղվելու են մեկ ստատուս-քվոյից մյուսին անցման հիմնախնդրով, մեր անմիջական հարևանները և առաջին հերթին՝ Թուրքիան ու Ադրբեջանը փորձելու են օգտվել տարածաշրջանի վերաձևման ծրագրերից: Ուստի պատերազմի հավանականության նվազումը՝ ստատուս-քվոյի առկայության պայմաններում, կարող է վերածվել նաև **պատմական անհրաժեշտության**՝ վերջինիս փոփոխության համատեքստում:

Իսկ մինչ այդ՝ միանգամայն տեսանելի հեռանկարում նժարի վրա է դրվելու

6 Տե՛ս Մերուժան Վ. Սիբայեյան, Հայաստանն արդիականացման մարտահրավերի առջև..., «Վեմ», 2011, N 3, էջ 168:

Մերձավոր ու Միջին Արևելքի հայկական համայնքների ճակատագրի հարցը, քանի որ վերջիններս, հարկադրաբար կողմնորոշված լինելով դեպի այդ երկրների իշխող վարչակարգերը, հայտնվել են «կառավարելի քառսի» պայմաններում վերապրելու բարդագույն խնդրի առջև:

Սակայն, քանի որ գլոբալ մակարդակի վրա առկա ուժերի անհավասարակշռության սուր և անմիջական ազդեցությունն այս ենթատարածաշրջաններում նոր է միայն զգացվում, դրան ցուցաբերվող հակազդեցությունը **դիմադրողականության** որոշակի պաշար ունի: Անասհմանափակ չէ նաև ազդող բևեռի՝ Արևմուտքի ակտիվությունը պայմանավորող գործոնների «**ամրության պաշարը**», մասնավորապես, ներքին լուրջ հիմնախնդիրների առջև կանգնած ԱՄՆ-ի հնարավորությունների նշաձողը: Բայց տվյալ պարագայում՝ «ո՞վ է հաղթելու» գլոբալորոշումը մեզ համար մարտավարական նշանակություն ունի: **Բոլոր դեպքերում** իրական վտանգն այն է, որ ազդող ու հակազդող ուժերի բախման ու միահյուսման վերջնաարդյունքում «կառավարելի քառսը» կարող է վերածվել նաև **անկառավարելի քառսի**:

Ուստի, խուճապի մատնվելու փոխարեն հարկավոր է արձանագրել, որ համայն հայության Հայրենիքի մասին մեր բարձրագույն հայտարարությունները անցած 20 տարիների ընթացքում չենք ամրապնդել այնպիսի գործնական քայլերով, որոնք թույլ կտան կանխել մեկ անգամ՝ 1970-1980-ականներին արդեն տեղի ունեցած՝ Լիբանանի հայության ամերիկյան արտագաղթի հնարավոր կրկնությունը Միրիայում, Իրանում, իսկ հնարավոր է նաև՝ նույն Լիբանանում: Չստեղծելով զարգացող և արդիականացող տնտեսական համակարգ, չմշակելով ազատագրված տարածքների յուրացման գործուն ծրագրեր, Հայաստանը ներկայումս չի կարողանում դառնալ մշտական հանգրվան Իրաքի համեմատաբար փոքրաթիվ հայության համար, չխոսելով արդեն Մերձավոր ու Միջին Արևելքի ավելի ստվարաթիվ համայնքների մասին: Մինչդեռ ժամանակն անկասելիորեն առաջ է ընթանում, և ոչ ոք չի կարող երաշխավորել, որ ոչ թե վաղը կամ մյուս օրը, այլ **տեսանելի հեռանկարում** Իրաքի հայության ճակատագիրը չեն կիսելու Միրիայի և մյուս երկրների մեր հայրենակիցները: Ո՞վ է տեր կանգնելու նրանց, երբ Հայաստանում առկա **փողատիրության** պայմաններում մանր ու միջին բիզնեսի ոչնչացումը անգամ նրա քաղաքացիներին է ստիպում սեփական գլուխն ազատել արտագաղթի միջոցով:

Ժամանակի գոյաբանական իմաստի գիտակցումը տեսանելի հեռանկարին նախապատրաստվելու խոհեմության մեջ է: Նման հեռանկարում մեզ սպասող մարտահրավերները դիմակայելու համար Հայաստանին անհրաժեշտ է առնվազն **կրկնապատկել** իր ներկա բնակչության թիվը և **հնգապատկել** մեկ շնչին ընկնող միջին եկամուտը: Երկրի ներքին պաշարների սահմանափակության պատճառով դա հնարավոր է առաջին հերթին՝ վերջին 20 տարիներին արտագաղթի դիմած և Ռուսաստանում ու այլ երկրներում հարստացած մեր գործունյա ու եռանդուն հայրենակիցներին **վերադարձի ազատ պայմաններ** ապահովելու միջոցով: Չմոռանանք, որ հետամնաց և աղքատ Թուրքիան 1980-ականներին ոտքի են կանգնեցրել Գերմանիայում հարստացած և իրենց նախնական կապիտալի հետ միասին հետ վերադարձած ու սեփական բիզնեսը հիմնած գործարարները: Քանի որ հայերիս կապվածությունը հայրենիքի հետ ավելի ամուր է, սպա միակ գործոնը, որ խոչընդոտում է նման հնարավորության իրացմանը, Հայաս-

տանում ձևավորված մենաշնորհների համակարգն է: Հայաստանցի գավառամիտ «գործարարները» ցանկության դեպքում անգամ չեն կարող քաղաքակիրթ մրցակցության մեջ մտնել Ռուսաստանում, առավել ևս Արևմուտքում ավելի մեծ կարողություններ ու հմտություններ ձեռք բերած մեր հայրենակիցների հետ:

Ուրեմն՝ Հայաստանի լճացած պետաքաղաքական համակարգը, որ հիմնված է բիզնեսի ու քաղաքականության միաձուլման իրողության վրա, կասեցնելով երկրի զարգացման ընթացքը՝ առասպելական վիշապի մման փակել է պետության ու ազգի առաջադիմության կենարար աղբյուրը: Եվ իր գավակների հնարավոր վերադարձի համար պայմաններ ստեղծելու գործում անգոր Հայաստանի Հանրապետությունն այսօր հայտնվել է այն **աղքատ հոր** կարգավիճակում, որը 20 տարվա ընթացքում չի կարողացել անգամ մի հյուղակ կառուցել իր տարագիր գավակների համար:

Նման անպատվաբեր դերի հետ հաշտվելու՝ մեզ տրված ժամանակը սպառվել է: Եթե տարածաշրջանների վերածննդն ժամանակացույցը 7-10 տարվա հաճախականություն ունի, ապա նվազագույնը մինչև 2016-2017 թվականները մեր երկիրը պետք է լիովին պատրաստ լինի Մերձավոր-Միջին արևելյան անկառավարելի քառսի պայմաններում գոյատևելու և միաժամանակ՝ համայն հայության **կենարար փարոսը** դառնալու առաքելությանը: Իսկ դա նշանակում է, որ 2012-2013 թթ. ընտրաշրջանի միջոցով, ցանկացած ճանապարհով, վերևից կամ ներքևից, երկրում արմատական փոփոխությունների սկզբնավորումը **կյանքի ու մահվան** հարց է Հայաստանի ու հայության համար:

Պատմությունը կրկնվելու սովորություն ունի՝ որակապես նոր մակարդակի վրա: ԽՍՀՄ փլուզման դարաշրջանում մենք օգտվեցինք նրա այդ կախարդական հատկանիշից՝ հետ բերելով 1918-1921 թվականներին կորցրածի մի մասը: Բայց այսօր պատրաստ չենք ոչ միայն հաջորդ քայլն անելու առաքելությանը, այլև կարող ենք ձեռքից բաց թողնել կենսականորեն անհրաժեշտ նվազագույնը՝ ազատագրված տարածքներով պաշտպանված Արցախը, որովհետև մեր հակառակորդը նյութատեխնիկական հնարավորությունների աճի դինամիկայով նկատելիորեն առաջ է անցել մեզանից և սպասում է հարմար պահի՝ իր առավելությունն իրացնելու համար: Այդ պահը կարող է վրա հասնել գլոբալ զարգացումների արդյունքում՝ համընդհանուր քառսի մթնոլորտում, երբ տարածաշրջանի վերածննդն համար գերտերությունների պայքարը կմիահյուսվի նրանում դերակատար յուրաքանչյուր ազգի ու պետության ծրագրերին ու նպատակներին: Ուրեմն՝ ժամանակի գոյաբանական իմաստը Հայաստանի սահմաններին մոտեցող վտանգներին դիմակայելու համար անհրաժեշտ **կենսունակ ազգային պետության** ձևավորման հրամայականի մեջ է:

Խմբ.:

## ONTOLOGICAL MEANING OF TIME

Editorial